# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**ՀՀ ԳՄ ՋՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի**

գ. Ջոլաքար **«03» «08» 2021թ.**
**Ժ 11:00**

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Գ. Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ Պ. Սարիբեկյան, Լ. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

1. Հայտերը բացվել են 2021թ. օգոստոսի 03-ին՝ ժամը 11:00-ին:
2. Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

| h/h | Մասնակցի անվանումը | Մասնակցի հասցեն |
|---|---|---|
| 1 | «Ոյուտ Սենթր» ՍՊԸ | Ք. Արթիկ, Գ. Նժդեհ 3 |
| 2 | «Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ | Ք. Գավառ, Արծվաքար թաղամաս |
| 3 | «Սուսմետ» ՍՊԸ | Ք. Մարտունի, Պռոշյան 16 |
| 4 | «Էներգացանցշին» ՍՊԸ | Ք. Երևան, Բաբայան 10/1 |
| 5 | «ՆԱՆԵ-ՇԱՔԵ» ՍՊԸ | ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ջոլաքար, գ/փողոց շենք 119/1 |
| 6 | «ԷՅԷՄ ՇԻՆ» ՍՊԸ | ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ձորագյուղ, 12փ., տ. 31 |
| 7 | «ՇԻՆ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ | գ. Վաղաշեն, 3-րդ փողոց, 2-րդ նրբանցք, տուն 3 |
| 8 | «ՇԻՆ-ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ | Ք. Մարտունի, Կամոյի փողոց |
| 9 | «Գագիկ-Արմեն Գազշին» ՍՊԸ | Ք. Մարտունի, Ձիրոյան 44 |

3. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված հայտերի հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

Գնահատման արդյունքում՝ գնահատող հանձնաժողովը մասնակիցների հայտում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները՝ հրավերի պահանջների նկատմամբ.

**ա/ «Գագիկ-Արմեն Գազշին» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկի «աշխատանքի անվանումը» սյունակում լրացված չէր գնման առարկայի անվանումը, այնինչ պետք է պարտադիր լրացված լիներ, տվյալ դեպքում խախտվել էր ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի /Գ/ դրույթը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով՝ գնահատող հանձնաժողովը մերժեց **«Գագիկ-Արմեն Գազշին» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ մասնակցի գնային առաջարկը ներկայացված էր հրավերի պահանջներին անհամապատասխան:

**բ/ «ՇԻՆ-ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ի, «Սուսմետ» ՍՊԸ-ի և «ԷՅԵՄ ՇԻՆ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտերում բացակայում էր իրենց կողմից լրացված ծավալաթերթ-նախահաշիվը, այնինչ պետք է պարտադիր ներկայացված լիներ: տվյալ դեպքում խախտվել էր ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի /Ա/ դրույթը:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի դրույթներով՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին՝ առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Մյուս մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում էին հրավերով սահմանված վավերապայմաններին և պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Կասեցված նիստը վերսկսել 2021 թվականի օգոստոսի 5-ին ժամը 10-00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ձոլաքար, 2-րդ փողոց, շենք 17 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

| **հ/հ** | **Մասնակցի անվանումը** | **Հրավերի պահանջներին համապատասխանությունը** |
|---|---|---|
| 1 | «Ոյուտ Սենթր» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 2 | «Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 3 | «Սուսմետ» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 4 | «Էներգացանցշին» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 5 | «ՆԱՆԵ-ՇԱՔԵ» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 6 | «ԷՅԷՄ ՇԻՆ» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 7 | «ՇԻՆ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 8 | «ՇԻՆ-ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ | Համապատասխանում է |
| 9 | «Գագիկ-Արմեն Գազշին» ՍՊԸ | Չի համապատասխանում է |

**5.** Բավարար գնահատված հայտի գնային առաջարկը՝ ՀՀ դրամով

Չափաբաժին N 1

Ձոլաքար համայնքի ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ

| **ՀՀ** | **Կազմակերպության անվանումը** | **Նախահաշվային գինը** | **Արժեք** | **ԱԱՀ**** | **Ընդհանուր գինը** |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Ոյուտ Սենթր» ՍՊԸ | 22486170 | 15750000 | 3150000 | 18900000 |
| 2 | «Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ | | 16250000 | 3250000 | 19500000 |
| 3 | «Սուսմետ» ՍՊԸ | | 18400000 | 3680000 | 22080000 |
| 4 | «Էներգացանցշին» ՍՊԸ | | 18749448 | 3749890 | 22499338 |
| 5 | «ՆԱՆԵ-ՇԱՔԵ» ՍՊԸ | | 21959860 | - | 21959860 |
| 6 | «ԷՅԷՄ ՇԻՆ» ՍՊԸ | | 22100000 | - | 22100000 |
| 7 | «ՇԻՆ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ | | 22482044 | - | 22482044 |
| 8 | «ՇԻՆ-ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ | | 24000000 | 4800000 | 28800000 |

6. Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա, և հայտերի բացման նիստին ներկա լիազորված ներկայացուցիչները լիազորված չէին գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու իրավասությամբ, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի բ/ ենթակետի դրույթներով՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը.

- էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին՝ 2021 թվականին օգոստոսի 11-ին, ժամը 14-00-ի ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ձոլաքար, 2-րդ փողոց, շենք 17 հասցեում գտնվող Ձոլաքարի համայնքապետարանի վարչական շենքում՝ գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին:

7. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել.

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել բանակցությունների վարման օրը, ժամը 14-00-ին, գ. Ջոլաքար, 2-րդ փողոց, շենք 17 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ ________________ Գ. Մխիթարյան

Անդամներ՝ ________________ Պ. Սարիբեկյան

________________ Լ. Գրիգորյան

Քարտուղար՝ ________________ Ժ. Խաչատրյան